

Փ Ո Ւ Ն Ջ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի. — Հատր 40 փարայ է. — Պոյս բաժանորդ լլլայ ուսողք մէկ արծաթ Աէճիա պիտի վճարէ 400 թուոյ համար լմի դաւառոց մէջ 25 դրչ, դարձնալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ապա լլլայով. — Ծանուցան տողը 40 փարայ է մէկ անգամի համար. — Լրացրու վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրու թիւն պէտք է լւզող առ Տնօրէնն ի Ղարս թիւ Ս Լուսաւորիչ եկեղեցւոյ փարս գրանը կից նոր Գրատունը:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ի՞նչ ընելու է այն եկեղեցականին, որ եկեղեցական մեծ խնդրոյ մէջ երկրի մի խիստ անխել ընկալար մը բռնած է . . . :

Հանրնի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը կիլիկիոյ կաթողիկոսական տեղապահ կը լուի: Հեռաւարար դիտէ թէ Նիկողայոսը ազգային եկեղեցւոյ կողմանէ կրքե կիլիկիոյ կաթողիկոս վաւերացուած չէ, թէ՛ անոր համար ամբողջ ազգը վեր ի վայր կը լլլայ, եւ այն, եւ այն, Ահա այս ամենը զիտոյող եւ առաջնորդ ու կաթողիկոսական տեղապահ եղող եպիսկոպոս մ'է, որ մէկ կողմանէ գրով առ ազգային կառավարութիւնն զարմանք ու ցաւ կ'այցանէ Նիկողայոսի տարտամբ ընկալից վրայ, եւ միւս կողմանէ՝ գարձեալ գըրով հաւատարմութիւն կ'այցանէ առ Նիկողայոս իբրեւ առ օրինաւոր կաթողիկոս կիլիկիոյ, եւ անկէջ այս մտտին գոհութեան գիր կընդունի:

Ի՞նչ ընել պէտք է այսպիսի խարդախ եկեղեցականի մը: — Խստապատժել պէտք է անցապաղ: Պատեւելու է ոչ միայն այս, այլ բոլոր այն վերականները որ Նիկողայոսի կա-

տակից կը տնուին: Նիկողայոս Հայաստանեայց եկեղեցին կանարդ է. Նիկողայոս ամբողջ ազգը կ'ազդէ. կամբարտաւանի, կապտամբի եւ ամեն իրաւունք աւարդարութիւն անակոխ կընէ:

Եկեղեցական իշխանութիւնը տակաւին տկար չշարժի, չարժիլ պէտք է, բայց արժանաւոր կերպով, ազգային եկեղեցւոյ դէմ եղած ծանր անարդ անաց վրէժն առնելու համար:

— Ամեն Տեղապահ Հայրը երէկ Պէշիկիմաշ Տատեան գերջ աստանը երթալով, շնորհաւ որեց վեհալ. Առաքել պէյը կայսերական կառավարութեան կողմանէ վերջին օրերս Նորին վաւեմութեան շնորհաւ առ պաշտօնին, եւ բարձր աստիճանին համար:

— Այս առաւ օտ մայրաքաղաքս հասաւ գեր. Տ. Սարգիս Ս. Սրբէպիսկոպոս Հասան Չախլիանց: Նորին գերապատուութիւնը, իր համբարդութեան ատեն, իցմբի ից խառտի եւ երուսապիսնայ մէջ խիստ սիրալիկ եւ չքեղ ընդունելութիւն գտած է: Գահիրէ ուն ռական հիւպատոս միջոցաւ բարձր խորհրդին ալ ներկայանալով, պատուով ընդունուեր է: Իցմբի ազ-

գայնոյ կողմանէ եղած ընդունելու թիւեր աւելի փառաւոր եղած է : Մնցեալ շարթում ինչպէս ծանուցած էինք՝ պիտի դառնար մայրաքաղաքըս, բայց խնդրեր են քանի մ'որ ալ աւելի կենալ :

— Ոսկերչաց պատուաւոր արհեստաւորներէն մէկ քանի ուսումնասէր անձինք ընկերութիւն մը կազմեր են Բումբէլի— Հիսարի վարժարանին նըպաստելու համար, որուն մէջ կկըրթուին նոյն գիւղին տառապետալ հըրկիզելոյ որդիքն : — Այս ընկերութիւնը Յական զուրուշի ամուսններով բարեսէր ազգայնոց օգնութեան կը դիմէ : — Յիշեալ գիւղին աղիողորմ վիճակին վրայ արդէն բաւական տեղեկութիւն տուած ըլլալով, անտառակոյտ եմք որ ամեն ազգայինք սիրով ւը գումին իրենց ներկայացած տամակը, որ ստորագրեալ պիտի ըլլայ ընկերութեան դանձապետ էլ մասեան մեծ . Պօղոս աղայէն :

— Մանգումէի մէջ, եռասուղ ստորագրութեամբ և անթուական, թշնամանալիր նամակ մը կար անցեալ շարթում, մայրաքաղաքս դանուող կարնեցի Տ. Մելքիսեդեկեան Յովհաննէս աղայի դէմ :

Մէկ քանի կարնեցոց վկայութիւնը կապահովցունէ զմեզ հրատարակել թէ յիշեալ անձը պատուաւոր մէկն է, և բոլորովին զրպարտութիւն են իրեն դէմ եղած թշնամական ակնարկութիւնները : Հեռաւարար կցաւիւք որ Մանգումէի անստորագիր նամակագիրը խիղճ չէ ըրեր հրապարակադոյժ ընել մեր մէկ յարգոյ ազգայնոյն պատիւը :

— Իճատիյէի վարժարանին յարգոյ կառավարչէն :

Տէր

Անցեալ շարթումն 332 բորդ թիւ թերթերնուդ մէջ գործանալով կարգացի որ մեր դպրոցի աշակերտք Արապզատէ զբօսանք ըրած ժամանակինն Նէճիպէճին լիտի խաղը կանչելու համարձակած ըլլան, ասի հիմնովին սխալ է եւ մարման հաճոյ :

Ասիկայ Ձեր Մեծապատուութեանը հաղորդող պատուարժան անձը գուցէ դպրոցի՝ եւ արտաքոյ դպրոցի տղաքը չէ կրցած որոշել . որովհետեւ յիշեալ խաղը կանչող տղաքը քանի մը սրիկայններ են, որոնք գրեթէ միշտ ան տեղուանքը թափառական կըրչին, եւ այսպիսի լիտի խաղեր մարտնչներ կկանչեն, որուն ճշմարտութեանը համար յարգելի թաղեցւոցս առջին պատասխանատու եմ :

Մենք՝ դպրոցիս արդի խեղճ կացութեանը վրայ պարտաւորեալ եմք լալու եւ ո՛չ թէ խաղ կանչելու : »

ԽՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Եգիպտոսի բարձր . Խըսիվը երկու շարթի օրը Պէրլին հասնելով, թագաւորին և օսմանեան դեսպանին կողմանէ պատուով ընդունուեր է :

— Պալիէրայի թագաւորին գահաժառանգ իշխանը երկու շարթի օրը մայրաքաղաքս եկած է ծպտեալ կերպարանքով :

— Եգիպտոսի իշխանութիւնը Աղեկամարտի մէջ իամայիլիէ ըսուած անգըր յատկապէս քէօչկի մը շինել կուտայ, Գաղղիոյ կայսրուհւոյն բնակութեան համար : Այս շինութիւնը հաղարքսակ գրամի պիտի ըլլայ եղեր :

— Բազմածանօթ Մանոլ աւաղապետին բռնուած ըլլալուն լուրը

ստոյգ չերաւ, բայց ձեռք առնուած
ազգու միջոցներուն վրայ յոյս կայ թէ
մօտերս անսպառնաւ կրնուի :

—Օգոստ . Սուլթանը երկուշաբթի
օր Տօլմա—Պահէէի պալատը ձգելով՝
Ալեմասաղի իր քէօշքը գացեր է : կրս-
ուի թէ՛ Նորին Վեհափառութիւնը
15 օրի չափ հոն պիտի կենայ :

—Կիւմանք թէ բարձր . Ալի փա-
շան այսու հետեւ երկուշաբթի օրերը
Գուռը չպիտի երթայ . և դեսպան-
ները իր ապարանքը պիտի ընդունին :

—Սրբալի մէջ շրջաբերութեան հան-
ուեր են, անցեալները Վիէնայի մէջ
խլիանին անունով ու պատկերով տը-
պէլ տրուած ստակները :

—Կրետէի ապսամբութեան ա-
տեն Շիրայի մէջ և Յունաստանի ու-
րիշ կողմերը հաստատուած օգնու-
թեան մասնաժողովները մօտերս պի-
տի հրատարակեն եզեր, իրենց ձեռ-
քը հասած ստակին հաշիւը :

—Մայրաքաղաքիս քուրիէ տ'Օ-
րիան լրագրոյն ըսածին նայելով տաս-
ներկու անձինք ընկերութիւն մը կազ-
մեր են, բոլոր Չինաստանի կողմերը
երթալ պտրտելու համար :

—Սուէիշի ջրանցքին բացման հան-
գէտը մօտերս շատերուն ուշադրու-
թիւնը գրաւած ղլլալով, կըսուի թէ՛
Բերա ընկերութիւն մը կազմուելու վը-
րայ է, որոյ գործը պիտի ըլլայ եզեր,
մէկ ամսուան համար այս հանդիսին
ներկայ ըլլալ փախաքողները նոյն
կողմերը տանելու :

Ընկերութիւնը հետեւեալ ծախքով
պիտի տանի : 2000 առաջին կարգի .
1500 երկրորդ կարգի և 1000 ֆրանդ
երրորդ կարգի համար :

—Մնցեալ շաբաթ օր մայրաքաղաքս

հասաւ Բերայի քաղաքական խորհրդ-
դոյն նախորդ նախապահ Մալի պէյը,
որ մասնաւոր պաշտօնով մը քիւրախ-
տան կգտնուէր :

—Երկուշաբթի օր հիւսիսային
գերմանական դաշնակցութեան ներ-
կայացուցիչն ալ Տաճկաստանի մէջ
օտարայ կալուած ունենալու պայմա-
նադիրը ստորագրեր է :

—Երկուշաբթի երեկոյ Շիրքէթի—
խայրիյէ ընկերութեան երկու նոր
շոգեմանները մայրաքաղաքս հասան .
սրանք Անգլիա շինուեր են :

—Մայրաքաղաքիս Լա թիւրքի
գաղղիական լրագիրը ուրիշ լրագրէ
մը առնելով հետեւեալ սողերը հրա-
տարակած է :

« Կհաւաստեն թէ՛ օգոստ . Սուլ-
թանը՝ Սուէիշի ջրանցքին բացման
հանդիսին ներկայ պիտի գտնուի, ո-
րով պիտի պարտաւորի Եգիպտոսի
բարձր . Խըտիվը իր ուզածը չկրնալ
ընել : Բարձր . Խըտիվը սրոյած պիտի
ըլլայ ամեն միջոց ի գործ դնել Սուլ-
թանին ներկայութիւնը արգիլելու
համար : »

Թեհրանէն Լոնտոն եկած նա-
մակներուն ըսածին նայելով՝ Պարս-
կաստանի մէկ քանի քաղաքներուն
մէջ վերջին օրերս պատահած խոռ-
վութեանց հեղինակները ոռուս գոր-
ծակալներ են եզեր : Այս նամակնե-
րը կըսեն թէ՛ Ռուսիա միշտ կջանայ
Պարսկաստանը աւելի իւր զօրութեան
տակ ընկճելու :

—Բեդրապուրիէն եկած հեռա-
գիր մը կիմանցնէ թէ՛ դահաժառանգ
մեծ դուքսին ամուսինը արու դաւակ
մը ծներ է :

—1866ին աւստրիական թղթա-
տար շոգենաւներուն յանձնուած նա-
մակներուն թիւը 355 միլիոնէն աւելի
չէր : Յաջորդ 1867 տարւոյն մէջ այս
թիւը դրեթէ կրկնապատկեր և աւելի
արդիւնք եղեր է , թղթատարութեան
ծախքն նոյն տարւոյն համար լջած
ըլլալուն պատճառաւ :

—Անցեալ 1868 տարւոյն մէջ Գաղ-
ղիոյէն չորս միլիոն Կաշէն աւելի դե-
նի Անգլիա դրիւներ է :

—Փարիզէն լաա . յունիս 3 և 4
թուականներով եկած հեռագրերուն
նայելով , կոտանդին մեծ դուքսը
Գորֆու պիտի երթայ , —քաղաքա-
կանութիւնը անորչ վիճակի մէջ է ,
Գաղղիոյ կառավարութիւնը մասնա-
ժողով մը որոշեր է ձեզայիրի համար
հիմնական կանոնադիրք մը խմբագրե-
լու պաշտօնով . —ստրաճայնութիւն
կայ թէ՛ Բրուսելոյ թագաւորը հի-
ւանդ է . —Թունուսի խնդիրը մտա-
տանջութիւն կողատճառէ :

—Գաղղիական լրագրի մը ըսա-
ծին նայելով՝ հորանտոյի հարուստ
տիկին մը շատ տարիներ Ափրիկէի
կողմերը պարտելով՝ անզայի բնա-
կիչներէն մեծ պատիւ գտեր է իրիւ
երկրորդ թագուհի Սարայի : Այս
կնոջ չրոյսք մօտերս կիսնայնեն թէ
անապատն մէջ թաղուհիի կերպա-
րանքով կոտորուի : Իրեն հետ հարիւ-
րի չափ անձինք կան : Արտապիւ ըզ-
գեատներ հաղած է և միշտ քօզար
կեալ վիճակի մէջ : Այս տարի ժա-
մացոյցին դորձածութիւնն ալ վերա-
ցեր է , և Թրիպօլիի հպանտական
հեպտոտոյին նամակաւ մը իմացուցեր
է որ աւաղէ ժամացոյց մը դրկէ իրեն :

—Կիւրակէ օր խաղիւղի Եէնի
մահալէ ըսուած անգը տան մը մէջ
հրդեհ պատահելով , մտա չէ պատ-
ճառեր ի շնորհս արթուն հսկողու-
թեան ոտիկանութեան անսխին , որ
անձամբ կրակը պատահած անգը դա-
ցեր է :

—Իսպիւտար բնակող կին մը զա-
ւակ մը ունի եղեր , որ յարմար առիթ
մը գտնելուն պէս տունէն կը փախչի
եղեր դէշ ընկերներու հետ տեսու-
թեան համար : Շատ անգամ մայրը
յանդ իմանական խօսքերով զինքը
կշտախթած ատեն կիսատանայ եղեր
աղէկ վարմունք ունենայ : Մօտերս
այս երիտասարդ տղան երեք օրի
չափ աներեւութանալով՝ խեղճ մայրը
երբ զինքը կը տեսէ , պէտք եղած
յանդ իմանութիւնը կընէ : Երիտա-
սարդը իւր դէշ ընթացից նկատմամբ
տնօթահար ըլլալով՝ դանակի հար-
ուածով մը ինքզինքը կղարնէ : Բայց
բարեբաղդաբար փոսնոյ ալից չէ եղեր
այս հարուածը :

—Անցեալները կին մը իր աղջկան
հետ էմիրիկէն ըսուած անգը բարե-
կամայ հետ տեսութիւն ըրած ատեն,
աղջիկը կթողու որ պարտէղին մէջ
դրօսնաւ : Խեղճ աղջիկը ուրիշներու
հետ խտրալով վաղած ատեն աւաղա-
նի մը մէջ կիյնայ յանկարծ . դուրս
հանուած ատեն բոլորովին թալխաց-
եալ վիճակի մէջ է եղեր :

ՏՆՕՐԷՆ ԵՐ ՏԵՐՆ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԻՆ
ՏՏԱԳՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ԲԻՒՐՃՅԱՆ